



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



3323

M  
66

1978

# ՀԵՐԻԱԹՆԵՐԻ ԱՃԽԱՐԾ

150

Դ. ԱՂԱՉԵՑՆԵՑ

ՀԵԹԻԱԹՆԵՐ

II

Արքային առաջնորդության  
վեհական պատճեններ



2

2794

23 JUN 2005

18 NOV 2010

Հ Ա Ր Ի Ս Թ Վ Ե Ր Ի Ս Շ Խ Ա Ր Հ 2

891.99

Հ-44

Դ. Ա Պ Յ Ե Ը Ն Ց



# Հ Ե Ք Ի Ս Թ Վ Ե Ր

Եղեգնուհի  
Անտառի մասնակից  
Ասլան-բալա



Հրատարակութիւն
«Ա. Լ Ի Ա Յ Ո Ւ Ն Ի Ե Ր Ա Հ»
Հնկերութեան

Թ Ի Ց Լ Ի Ս

Տպարան „ՀԵՐՄՈՒՆ“ Բնկ. Մադարեան փողոց № 15  
1904 (56)

06.02.2013

18696

2005 NUL 88

Дозволено цензурою. Тифлисъ 17 Февраля 1904 г.



3100  
44

## ԵՂԵԳՆՈՒՀԻ

1.

Մի թաղաւոր է էլել։ Այս թաղաւորը մի որդի է ունեցել մինուճար։ Տղան որ հասել է, հայրն ասել է. — Որդի, ժամանակ է քեզ ամուսնանալու. ում ևս աշքաղբել, ասա, գնանք նրան ուզենք, կամ թէ չ' մեղ կամք տուր, մենք ինքներս կընտրենք քեզ յարմար մի աղջիկ։

Որդին ասեց. — Հայր, ևս միտք չունիմ աղջիկ ուզելու, իսկ եթէ ուզելու լինիմ, պէտք է այնպէսն ուզեմ, որ հօր ու մօր ծնունդ չինի։

Զարմանում է հայրը և ասում է. — Սյդպէս բան անկարելի է։

Որդին ասում է. — Անկարելի բան չըկայ, հայր. Աստուծու ձեռին ամեն ինչ հեշտ է, նահարող է քարերից էլ մարդիկ շինել։

Քանի անզամ որ հայրը առաջարկում է որդուն ամուսնանալ, որդին միշտ այս է ասում, թէ հօր ու մօր ծնունդ ուզելու չ'։

Ճատ որ ասում է որդին և ասում է հաւատալով և ոչ թէ գիտութեամբ բանը գժւարացնելու համար, թաղաւորն էլ է հաւատում որ կարելի բան է այդ, սկսում է վինտրել որդու ուզածի նման մի աղջիկ։ Շատ է հարց ու փորձ անում, շատերն ասում են, որ լսել են, թէ եղած է այդպէս բան, բայց իրանց աշքովը տեսած չեն և չըգիտեն, թէ որտեղ կարող են մարդիկ ծառի պէս բսնել և չունենալ ոչ հայր և ոչ մայր։

Թաղաւորն իր որդու սիրոյն համար ընկաւ աշխարհքէ աշխարհք և չոլէ չոլ, շատ տեղ ման եկաւ, շատ տեղ

հարց ու փորձ արաւ, ոչինչ չըդտաւ: Վերադարձին մի անտառի մէջ պատճեց նրան մի ծերունի, նրան էլ յայտնեց թագաւորը, թէ ինչի է ման գալիս: ծերունին ասաց.—Դրա համար հարկաւոր չէ հեռու երթալ. քո քաղաքի մօտ մի մեծ գետ կայ, նրա ափին մի եղեղնուտ կայ, ուր մարդի ոտք ընկած չէ դեռ ևս, որովհետեւ այն տեղը սուրբ և անմատչելի է համարւում, իսկ շատերն էլ կարծում են, որ այնտեղ աներեցիթ ողիք կան: Կերթաս այնտեղ, կընտրես եղեղնիցից ամենից գեղեցիկը, կըկտրես չբանեցրած դանակով, կըձգես ջուրը և նա խսկոյն կըդառնայ աղջիկ քո որդու հաւանած:


Թագաւորն ինչպէս որ լսեց, այնպէս էլ արաւ: Եղեգը աղջիկ դառաւ և մնաց զրի մէջ ընկղմած, դաւրս գալ ամաշեց, որովհետեւ մերկ էր: Թագաւորն ասաց.—Սպասիր այստեղ, ես քեզ համար հազուստ և աղախիններ կուզարկեմ. դու իմ հարսնացուն ես. քեզ պիտի ուզեմ իմ որդուս համար: Այդ ասաց թագաւորը, և նրա անունն էլ դրաւ եղեղնուհի, որ կընշանակէ եղեգն աղջիկ:

## 2.

Գետի մօտերքում բնակւում էին թափառական սեադէմ բօշաներ: Թագաւորը որ հեռացաւ, մի բօշա աղջիկ գնաց նոյն տեղը, ուր որ թագաւորն էր, և տեսաւ այնտեղ մի հրաշալի գեղեցկութեան աղջիկ: Հարցրեց նրա ով լինելը, աղջիկն էլ ասաց, որ թագաւորի հարսնացուն է, հիմա պիտի գան տանեն իրան:

Բօշան տեսաւ, որ եղեղնուհին շատ միամիտ է, ուզեց ինքը բռնել նրա տեղը:—Դուրս եկ, ասաց, չըիցը, ինձնից մի քաշւիր: Աղջիկը դուրս եկաւ ափը թէ չէ, բօշան նրան խեղղեց ու զցեց գետը, իսկ ինքը մերկացաւ և ընկղմւեց զրի մէջ, որ կարծեն թէ նա է եղեղնուհին:

Թագաւորի աղախինները եկան փառաւոր հազուստով և տեսան ինչ... մի սկ, այլանդակ բօշա աղջիկ: — Դու-



ես, ասացին, Եղեգնուհին:—Այն, պատասխանեց աղջկը: —Հարա ինչու ես սե ու տգեղ, նա շատ շընաղ և աննըման պէտք է լինի:—Դիտէք, ասաց բօշան, դուք շատ ուշացաք, արեն այրեց ինձ և փոխեց կերպարանքս: Բայց այս վնաս չունի. Եթէ ինձ պահեն շուշաբանդ պալատում, մի քանի օրից կրկին կստանամ իմ առաջան գեղեցկութիւնը:

Հաւատացին նաժիշտները, թագուհու հագուստ հագցրին և տարան ապարանք: Թագաւորը որ տեսաւ, մնաց զարմացած:—Սա իմ տեսած աղջկը չէ, ասաց: Թագաւորի որդին էլ որ տեսաւ, յետ քաշեց զգանքով:—Սա չէ, ասաց, իմ ուզածը: Նա սպիտակ պէտք է լինի, ինչպէս հրեշտակ, իսկ սա սև է, ինչպէս սատանայ:

Խօսեցրին աղջրկանը. Նա մի և նոյնն ասաց, ինչ որ նաժիշտներին:—Լաւ, ասացին, և տարան դրին մի շուշաբանդ սենեակում, որ այստեղ գեղեցկանայ, և սկսեցին մեծ պատով պահել: Միայն տղան մօտ չէր գնում. Նա զգում էր, որ բանի մէջ շարի մատը կայ խառնւած, որ այստեղ մի խարդախութիւն կայ, բայց ինչպէս իմանայ եղելութեան որպիստիւնը:

## 3.

Զատ տիսուր է թագաւորի որդին: Օրեր են անցնում, բայց նորահարսի գեղեցկանալու մասին լուր շրկայ. ինչ-քան լաւ են պահում, այնքան աւելի է պլազում նա, ինչ-պէս սե սաթ, և գիրանում ու հաստանում է խոզի պէս:

Թագաւորի որդին իր մտատանջութիւնն ու սրտնեղութիւնը փարատելու համար զնաց դէպի գետի ափն զբօնելու. Այնտեղ նա ձկնորսներ տեսաւ, որոնք ուռկանով ձուկն էին որսում: Կանչեց նրանց իր մօտ և ասաց. —Ռւռկաններդ ձգեցէք ահա այս ինչ տեղը: ուզում եմ բախտ փորձել. ինչ որ դուքս գայ, իմս է:

Ուռկանը ձգեցին, և դուքս եկաւ մի հրաշալի ձուկն,

ինքն արծաթի, իսկ թևերը ուսկի: Զարմացան որսորդները. այնպիսի ձուկն նրանք ոչ լսած և ոչ տեսած էին:

—Քեզ միայն արծանի է այս ձուկը, ասացին նրանք թագաւորի որդուն, —Եթէ առանց քեզ էլ բռնած լինէինք, պիտի բերէինք քեզ ընծայ:

—Շնորհակալ եմ, ասաց թագաւորի որդին, և նրանց լաւ վարձատրեց: Չուկը տարաւ և ձգեց իր ծաղկանոցի աւագանը, և այնուհետև էլ նրա մօտից չէր հեռանում, նրան նայելուց չէր կշտանում, նրա մօտ էր ուտում, խմում և ննջում:

Բօշա աղջիկն իմացաւ, որ մի հրաշալի ձուկ է բրոնել թագաւորի որդին. և իսկոյն հասկացաւ, որ նա ինքն է Եղեգնուհին, որ սպանելուց յետոյ ձկան կերպարանք է ստացել, էլ քոնը շրտարաւ: Եւ մէկ օր ասաց նաժիշտներին. —Ի՞նչ կարող եմ զեղեցկանալ, բանի որ թագաւորի որդին խորշում է ինձանից և իր սէրը մի ձկան է տրւել: Եթէ այն գեղեցիկ ձուկը մորթեն և ուտեցնեն ինձ, իմ գեղեցկութիւնը կրկին վրաս կըգայ:

Այս բանը շատ որ ասաց և հաւատացրեց ամենքին, ճարահատեալ ձուկը մորթեցին և ուտեցրին բօշային, բայց նա էլի մաց բօշա ու բօշա:

## 4.

Չուկը որ կերաւ աղջկը, փշերը տըւաւ նաժիշտներին և հրամայեց որ ուտեն: Նաժիշտները, գեղեցկանալու յուսով, կերան ձկան փշերը, բայց մէկ փուշ ազատեց նրանց բերանից և աղբի հետ պարտէզ ընկնելով մի ծառ դառաւ, մի զարմանալի և հրաշալի ծառ, մշտագլաւը և մշտաբեր: Նրա ծաղիկների հոտից մարդ չէր կըշտանում, իսկ պտուզն էր փունչ մարդարիտ: Թագաւորի որդին հիմա էլ այդ ծառի վրա սիրահարւեց, նրա հովանու տակ հաստատեց իր բնակութիւնը և զիշեր ցերեկ այնտեղից չէր հեռանում:

Բօշան զլխի ընկաւ, որ այդ ծառը ձկան մնացորդից

է առաջ եկել, շատ տիսրեց և ամենայն հնարք գործ դընելով՝ խարեց թագաւորին, թէ մինչև ծառը շրկտըէ, որդին իրան չի սիրիլ, և քանի որ նա չի սիրիլ, ինքը միշտ տղեղ կըմնայ:

Հաւատաց թագաւորը և կտրել տրւաւ ծառը: Բօշանայրեց ծառի բոլոր մասերը և ինքն իր մէջ հանգստացաւ:

Բայց ծառը կտրելիս մի կոկ տաշեղ թռաւ և մի խեղճ պառափ տան հերթովն ընկաւ ներս: Այս բանը շնկատեց բօշան, չնայած որ ամեն զգուշութիւն գործ էր դրել, որ մի շիւղ անգամ չաղատուի ձեռքիցը:

Պառաւը երբ տեսաւ տաշեղը, շատ հաւանեց. այս ինչ լաւ խուփ է, ասաց, և վեր առաւ նրանով ծածկեց մի բղուղի բերան:

Պառաւը շատ պղքան էր և իր ձեռքի աշխատանքովն էր ապրում. Այսաւօտք կանուխ դուրս էր գալիս տանից, զնում՝ իր սպանութեամբ մօտ ջահրա մանում, զործ անում, երեկոյին գոլիս էր տուն: Այսպէս միւս առաւօտը հինց որ գնաց իր բանին, բղուղի խուփը տեղիցը թռաւ և դառաւ մի սիրուն աղջիկ, այսինքն՝ էլի դառաւ. առաջան եղեգնուհին, միայն այս անգամ պարզ և սիրուն հագուստով զարդարւած:

Եղեգնուհին վեր առաւ աւելլ, տունը տեղը մաքուր սրբեց, կրակ արաւ, կերակուր եփեց և իրիկնադէմին, պառաւի գալու ժամանակը, թաք կացաւ մի անկիւնում: Պառաւը ներս մտաւ և տեսնելով ամեն ինչ սարքած, կարգած, տունն աւլած, կերակուրը եփած, մնաց զարմացած: — Ով պիտի լինի արած այս բանը, ասաց. զուռը կողբած էր, ոչ ոք չէր կարող ներս գալ. կարելի է հերթովը լինի մտած: Բայց ով որ է, ինձ լաւութիւն է արել, վատութիւն չի արել. երանի միշտ այսպէս անէ:

Եղեգնուհին լսեց պառաւի խօսքերը, տեսաւ որ զո՞ն է, սկսեց հաղալ և կամոց կամաց զուրս եկաւ մութ անկիւնից: Պառաւը որ տեսաւ եղեգնուհուն, մնաց հիացած: Աղջիկը փաթաթւեց պառաւին, համբուրեց նրա կուրծքից

և ասաց. — Դու ինձ մայր, ես քեզ աղջիկ...

— Ճատ ուրախ կըլինիմ, ասաց պառաւը, բայց դու այնքան գեղեցիկ ես, որ կարծես հողեղէն չըլինիս. երեսիցդ լոյս է թափառում. քանի որ դու կըլինիս, էլ մեր տանը հարկաւոր չի լինիլ ոչ ճրագ և ոչ կրակ: Այս ասաց պառաւը և սկսեց համբուրել աղջկանը, ինչպէս մի սրբուհու, և հարցրեց, թէ ով է նա:

— Իմ ով լինելս մի հարցնիր. ժամանակ կըգայ, կիմանաս. իսկ մինչև այն ժամանակը ոչ որի մի էլ ասիլ, որ ինձ նման մի աղջիկ ունիս. իմ երեսը ոչով շըպիտի տեսնի, բացի քեզանից: Դու կը շարունակես քո պարապմունը, ես տանը կըմնամ, ինձ համար կար ու գործ կը բերես, ես կանեմ:



Եղեգնուհու հրաշալիք ուղղութիւն համբաւը հասաւ մինչև թագաւորի ապլանքը. Առաջաւորի որդին կանչեց պառաւին և զանազան կար ու զործի պատւէրներ տրւաւ նրան: Պառաւը շուտով՝ հասցրեց այդ ամենը. տղան նայեց, մնաց զարմացած, կարծես ձեռք ու ասեղ չէր դիպած:

— Այ պառաւ, ասաց թագաւորի որդին, ով է կարել այս, պէտք է ինձ ուղիղն ասես:

Պառաւը շրկարողացաւ թարցնել և ասաց, թէ այսպէս ու այսպէս մի աղջիկ ունիմ, նա է անում այս ամենը: Թագաւորի որդին ասաց, — Ես պիտի տեսնեմ նրան: Պառաւն ասաց. — Ճատ լաւ, բայց թոյլ տուր, առաջ իրանից հրաման առնեմ, թող իր կամքովը լինի: Տղան ասաց. — Ճատ լաւ, բայց չուշացնես:

Պառաւն ասաց աղջկանը, որ թագաւորի որդին ուղում է նրա տեսութիւնը: Աղջիկն ասաց. — Ճատ լաւ. կասես իրան, որ մենակ չըգայ, այլ թող հետք բերէ իր հօրն ու մօրը և իր նորանարսին: Դու ճաշի հրաւիրիք նրանց, մի վախենար. ես ամեն պատրաստութիւն կրտես:

նեմ, նրանց քաղցած չենք թողնիլ:

Պառաւը յալտնեց թագաւորի որդուն, և նա էլ, ինչպէս ասել էր աղջիկը, վեր առաւ հօրն ու մօրը և հարսնացուին ու զնաց պառաւին հիւր.

Եղեգնուհին դռան մօտ դիմաւորեց նրանց և թագաւորավայել ձեռով ու պատով ներս հրաւիրեց հիւրերին: Ամենքը մացին հիացած: Ի՞նչ զեղեցկութիւն, ի՞նչ շարժմունք, ի՞նչ խօսք ու գրոյց: Եղեգնուհու հասակը իսկ և իսկ եղեգնի նման ճկուն ու ճօճուն. Երբ խօսում էր՝ կարծես բերանից մարզարիտ էր թափում. Երբ ժպտում էր. Երեսին վարդ-մանիշակ էր փուում: Թագաւորն իսկոյն ճանաշեց, որ իր տեսած աղջիկը սա էր, բայց ձայն շըհանեց. թագաւորի որդին էլ թէպէտ չէր տեսել, բայց սըրտով իմացաւ որ սա պիտի լինի իր հարսնացուն. իսկ բօշա աղջիկը ամենից շուտ ճանաշեց և աւելի սև սեսցաւ: Տուն մտան թէ չէ, սկսեց սրտնեղիլ. — Ա՛խ, այս ուր բերիք ինձ, ասաց, միթէ մեզ կըփայելէ այսպիսի մի խըճիթ մտնել ու այս սատանայի երեսը տեսնել:

Բայց նրա խօսքին ոչ ոք ուշադրութիւն չըդարձըրեց, ամենքի ուշը ու միտքը զըրաւել էր Եղեգնուհին: Պառաւի ուրախութեանը էլ շափ չըկար. տեսնելով իր աղջկայ արած աղդեցութիւնը, տեսնելով, որ թագաւորն ու թագուհին պատրաստ են իրանք ծառայելու նրան, բոլորովին ջանելացել էր և թէ էր առել, թոշում. մերթ թագաւորի ականջին էր քչփում մի բան, մերթ թագուհու: Պառաւն այն էր ասում, որ իր աղջիկը հողեղին չէ, այլ երկնքից իջած մի չնաշխարհիկ էակ է, որ նրա ձեռքին ամեն ինչ հնարաւոր է, և այլ այսպիսի գովութիւն ու փառաբանութիւն: Վերջը թագաւորն ասաց.

— Սիրուն աղջիկ, մենք քեզ հետ խօսելուց շենք կըշտանալ. քեզ հետ ապրողի համար տարին մի ժամանակ կանցնի. լաւ կըլինի, ուրեմն, որ շուտ ասես մեզ, թէ ովք ես, ի՞նչ տեղից ես ընկել այստեղ, ովքեր են քո հայրն ու մայրը և որտեղ են կենում:

Աղջիկն ասաց. — Ողջ լինի թագաւորը, ես իմ մասին

ոչինչ չեմ կարող ասել, բայց եթէ թոյլ կըտաք ձեր աղախնին և ձանձրութիւն չի լինի ձեր մեծութեանը, ես մի համառօտ հէքիաթ կասեմ:

— Ըստ ուրախ կըլինինը, ասաց թագաւորը, ինչ որ ասէք, մենք ուրախութեամբ կըլսենք:

Եղեգնուհին մէջտեղ բերաւ մի վաղան չոր ճիւղ և տնկեց սուփրի մէջտեղը, մի մորթած ու մաքրած հում կաքաւ էլ շամփուրը բաշած՝ բերաւ, զըրաւ սուփրի վրայ և ասաց.

— Այս, ինչ որ ես ասելու եմ, եթէ ստոյգ լինի, թող այս կաքաւը անկըակ խորովի և այս վաղան չոր ճիւղը դալարի:

Ամենքն էլ աշք ու ականչ դառան, որ տեսնեն՝ աղջիկն ինչ պիտի պատմէ: Աղջիկն սկսեց.

«Մի թագաւոր մի որդի ունէր մինուճար: Երբ որ որդին հասաւ և թագաւորն ուզեց նրան ամուսնացնել, նա ասաց. Հայր, ես կամուսնանամ, բայց իմ ամուսինս պէտք է հօր ու մօր ծնունդ չըլինի»:

Այս ասաց աղջիկը և դառնալով կաքաւին՝ հարցըրեց.

— Այսպէս չէ, կաքաւ.

Կաքաւը պատասխանեց.

— Այդպէս. տիրուհի:

Յետոյ աղջիկը դարձաւ վաղանը և ասաց.

— Վաղին, ուրախացիր, խաղող վեր կալ:

Վաղը դալարեց և սկսեց ծաղկել: Կաքաւն էլ սկսեց թշդշալ ու խորովւել, ինչպէս կըակի վրայ: Աղջիկը շըննակեց:

«Ճար չըկար. թագաւորը շատ ման եկաւ, որ իր որու ուզած մի աղջիկ գտնէ, վերջը մի ծերունու խորհրդով նա մի եղեգն կտրեց, ձգեց գետը. Եղեգն իսկոյն աղջիկ դառաւ և ընկղմեց գետի մէջ»:

— Այսպէս չէ, կաքաւ.

— Այդպէս, տիրուհի:

— Վաղին, ուրախացիր, խաղող վեր կալ:

Կաքաւն սկսեց խորովւել, իսկ վաղը խաղող վեր կա-

լաւ: Բօշա աղջիկը գլխի ընկաւ որ հիմա իր չարագործութիւնը պիտի պատմէ, սկսեց սրտնեղիլ, տրտնջալ, թէ շոգ է, չի կարող նստել, տուն է ուզում գնալ:

— Նատ ես շտապում, ասաց թաղաւորը, հիմա կը տանենք քեզ ուր որ հարկաւոր է: Աղջիկը շարունակեց.

«Աղջիկը մերկ էր, չէր կարող ջրիցը դուրս գալ: Թագաւորն ասաց. Այդտեղ սպասիր, ես քեզ համար հազուստ կուղարկեմ, կը հազնես ու կրդաս: Թագաւորը գնաց թէ չէ, որտեղից որ էր՝ մի աղջիկ դուրս եկաւ, դէմքն այլանչէ, որտեղից որ էր՝ արդեօք թէ խափշիկ, բօշա էր դակ ու սեւ, արար էր արդեօք թէ խափշիկ, բօշա էր թէ զարաչի, խարեց աղջրկանը, դուրս քաշեց ջրիցը, խեղից, զցեց ջուրը եւ ինքն ընկղմեց նրա տեղը: Եկան նաժիշտները եւ նրան տարան թագաւորին հարսնացու:

— Այսպէս չէ, կարաւ.

— Այսպէս, աիրուհի:

— Վազն, ուրախացիր, խաղող վեր կալ:

Բօշա աղջիկը տեղիցը վեր կացաւ, էլ չըկարաց դիմանալ: — Դա սատանայ է, ասաց, եւ ինչ որ տառմէ, բոլորն էլ սուտ է. դա ուզում է հիմա իմ տեղը բըռնել եւ հնարում է այդ բանը. դա կախարդ է:

— Լաւ, ասաց թագաւորը, դու կարողես գնալ տուն: Նաժիշտներ, սրան տարէք տուն եւ լաւ պահպանեցէք մինչեւ մեր դալը:

Եղեգնուհին պատմեց բոլորը, մինչեւ կարաւը խորովեց ու խաղողն էլ հասաւ: Խորովածը կերան եւ վրան էլ խաղողը: Եղեգնուհուն տարան պալատը, եօթն օր եօթը գիշեր հարսանիր արին. իսկ բօշային կապեցին մի ձիու պոչից եւ բարէքար տալով սատկեցրին: 2արն այնտեղ՝ բարին այստեղ:

## ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

### 1.

Անտառի խորբում մի ճօճ կար կապած և նրա մէջ մի մանուկ դրած: Լաց էր լինում մանուկը: Մայր չըկար մօտը, որ ծիծ տար, հայր չըկար, որ պահպանէր: Անտառումը մարդ չըկար:

Մի գթոտ պախրակով կաթնալից կրծքով եկաւ ճօճի մօտ իր հորթուկի հետ և տիսուր ձայնով երեխին ասեց.

Միրնե երեխայ, որք ես մնացել,  
Քո անբախտ մօրը զերի են տարել.  
Նա գնաց, կորաւ, էլ յետ չի գալու,  
էլ ոչ մի անզամ քեզ ծիծ չի տալու:  
Նա քեզ փաթաթեց լայն տերեներով,  
Ճօճի մէջ կապեց, նանիկը ասելով.  
Նա լաց էր լինում աղի արցունքով,  
իր վերջին նանիկն ասում էր լալով.  
«Նանա, բալիկս, նանա,

«Մեծատերն թաթաշոր,

«Մանրատերն ոտաշոր,

«Քամին կանի՛ ժաժ կըտայ,

«Պախրէն կըգայ՝ ծիծ կըտայ

«Նանա, գառնուկս, նանա»...

Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,

Պահեմ, պահպանեմ իմ հորթուկիս պէս:

## 2.

Պախրան ծիծ տըւաւ երեխին, երեխան կշտացաւ  
ու քնեց։ Պախրան իր հորթին թողեց երեխի մօտ, իսկ  
ինքը գնաց մօտերբում արածելու, որ կաթը շատացնի,  
և գայ երկուսին էլ ծիծ աայ։ Հորթը մնաց երեխի մօտ,  
օրօրեց նրան և նանիկ ասեց. —

Նանա, մանկիկ, նանա,  
Իմ մէրը ըո մօը նման չի,  
Ամեն խոտից կծիլ չի,  
Ամեն չքից խմիլ չի,  
Ամեն տափին նստիլ չի,  
Նա սարէսար ման կըդայ,  
Որբ կըդտնի, ծիծ կըդայ,  
Նանա, մանկիկ, նանա...

Պախրան կուրծքը լիքը յետ դարձաւ արօտատեղից  
և ծիծ տըւաւ երեխին էլ, հորթին էլ։


Ով որ տարով կըմեծանայ, մեր երեխան օրով մե-  
ծացաւ։ Շատ չանցաւ, նա զուրս եկաւ ճօճիցը, մէկ օր  
չորեքթաթ տըւաւ, միւս օրը ոտքի կանգնեց, մի քանի  
անգամ սահեց, վայր ընկաւ, բայց շուտով ամրացաւ և  
սկսեց պախրի յետեկց վազվըզել։

## 3.

Մի թագաւոր որդի չունէր. երազումն ասացին. «Թա-  
գաւոր, Աստած քեզ մի որդի պիտի տայ անտառի խոր-  
քումը»։

Մէկ անգամ անգաւակ թագաւորը որսի գնաց իր որ-  
սորդների հետ։ Շատ ման եկան, ոշինչ չըգտան, բայց որ  
հասան անտառի խորքը, այստեղ մի պախրի հետք գտան  
և նրա մօտ մի երեխի ոտնատեղեք։

Ամենքը մնացին զարմացած և չէին հաւատում որ  
երեխի կըլինին ոտնատեղերը. բայց թագաւորն իսկոյն յի-



շեց իր երազը և հրամայեց որսորդներին, որ երեխի  
հետքը քշեն և ուր որ լինի՝ գտնեն նրան:

Որսորդները գնացին և երկու ժամ շանցած՝ մի սի-  
րուն մերկ տղայ բերին թագաւորի մօտ և պատմեցին,  
թէ ինչպէս գտան նրան պախրի ծիծը ծըծելիս:

Թագաւորը շատ ուրախացաւ, երեխին գրկեց, համ-  
բուրեց և անոնքը դրաւ Պախրատուր: Պախրատուրը մե-  
ծացաւ թագաւորի պալատումը, լաւ ուսում առաւ, վերջը  
դառաւ թագաւոր և մեծ զօրքով գնաց իր մօրն աղատեց  
գերութիւնից:

## ԱՍԼԱՆ-ԲԱԼԱ

### 1.

Եղել է չի եղել մի թագաւոր: Մէկ օր այս թագա-  
ւորի որսորդներից մէկը գալիս է իր մօտ և ասում:

— Թագաւորն ապրած կենայ, ևս էսօր մի գարմանա-  
լի բան տեսայ մեր որսորդութեան անտառում: Մի էդ  
ասլան տեսայ և նրա հետ մի մանուկ եօթը կամ ուժ  
տարեկանի չափ: Մանուկն ու ասլանը խաղում էին իրար  
հետ, ինչպէս մայր ու որդի: Մէկ ուզեցի նետ ձգել, աս-  
լանին սպանել, բայց մէկ էլ վախեցի, ասացի՝ վայ թէ  
մանուկին դիպչի կամ ասլանը վիրաւորւի ու յարձակվի  
վրաս. սրա համար սուս ու փուս յետ վախայ:

Այս որ լսեց թագաւորը, շատ զարմացաւ և հրա-  
մայեց, որ մի քամի հազար մարդով գնան շըջապատեն  
անտառը, ասլանին սպանեն կամ վախցնեն, իսկ երեխա-  
յին ողջ ողջ բռնեն; բերեն:

Թագաւորի հրամանը կատարեց: Երեխային բռնե-  
ցին և բերեն: Մի կայտառ և սիրուն տղայ էր. աշքերը  
խոշոր, ճակատը լայն, դանզուր մազերը առիւծի ճանկե-  
բով սանրւած ու փուած ուսերի վրայ, մէջքը բարակ,  
կուրծքն ու թիկունքը լայն:

Տասը հոգով հազիւ էին կարողացել բռնել և կտպո-  
տել, բայց շատերին ճանկուտել էր սուր սուր եղունդե-  
րով: Խեղճը մերկ էր և համը, խօսել շըգիտէր, այլ մը-  
ռնչում էր առիւծի պէս, շըգիտէր, որ ինքը մարդ է և ոչ  
առիւծ:

X զույլուա

Տեսան որ արձակ պահելու հնար չըկայ, նրան կապեցին երկաթէ շղթայով և սկսեցին քիշ-քիշ ձեռնասովոր անել և ընտելացնել: Նրան անւանում էին Ասլան-Բալա, այսինքն՝ առիւծի ձագ, բայց թագաւորի որդին, Վուրգը, որ շատ սիրեց նրան հէնց առաջին օրից, նրա անունը զրաւ Արսէն: Վուրգն էր պահում Արսէնին, նրան հաց ու ջուր տալիս և ամեն տեսակ համադամ կերակուրներ, որ նա տեսնէ, թէ ինքը մարդ է և ոչ առիւծ: Եւ ճշմարիտ որ նա առիւծի ծնունդ չէր, այլ մարդու: Զազը կորցրած մի առիւծ ոլատահմամբ զտնում է մօրը կորցրած մը ծծկեր երեխայի և տանում է ծիծ տալիս, պահում:

Արսէնը մի քանի օրւայ մէջ շատ մեզմացաւ և այնքան սիրեց Վուրգին, որ բոլորովին ամենատուր եղաւ նըրան: Վուրգն էլ արձակեց նրան կապանքներից, լողացրեց, զլուխը սանդրեց, երկար ու սուր-սուր եղունգները կտրատեց, իր հագուստի նման հագուստ հագցրեց և սովորեցրեց նրան խօսել, երգել, խաղալ և բոլոր այն բաները, ինչ որ ինքը դիտէր: Երեք ամիս չանցած՝ Արսէնի վրայ ոչ մի վայրենութեան նշան չըմնաց, այլ և երեսց, որ նա շատ շնորհալի է և իմաստուն: Նրա լազուլիտինը, տեսութիւնը, հոտառութիւնը տամնապատիկ, քսանապատիկ աւելի էին զարգացած, քան թէ սովորական մանուկներինը: Նրա լեզուն այնքան ճարտար չէր, ինչքան սիրտը, որ լուռ ու մունչ յայտնում էր նրան, թէ ինչն է լաւ և ինչը վատ, ինչն է շար և ինչն է բարի: Մըտի իմացութիւնը, այն, որ ասում են «սիրտս ասում է, սիրտը չի տալիս, սիրտս իմացաւ, սիրտս քաշեց», ահա այս սրտի իմացութիւնը, որ ուսումնական մարդիկն անւանում են բնագդ (բնագդումն, բնագդեցութիւն) — Արսէնի մէջ չափից վուրս զարգացած էր և նա շատ բան իմանում էր, առանց նրա փորձն առնելու:

Ինչքան որ Վուրգը Արսէնին կըթեց, բան սովորեցրեց, մի այնքան էլ ինքը նրանից սովորեց: Վուրգը կըր-

թեց Արսէնի լեզուն, միտքը, Արսէնն էլ կըթեց Վուրգի մարմինն ու սիրտը: Արսէնը սիրում էր խաղալ, վազել, սիրում էր սար, ձոր, անտառ, տունը նրա համար մի տեսակ բանտ էր թւում, նա իր հետ քաշում, տանում էր և Վուրգին և զանազան մարդութիւններով կազզուրում էր նրա բնքուշ կազմւածքը: Այսպիսով՝ ինչքան որ Արսէնը փոխեց, վայրենութիւնից քաղաքավարի մարդ դառնալով, մի այնքան էլ Վուրգը փոխեց, ընկնելով բնութեան ծոցը. նա ուժեղացաւ, ճարպիկացաւ, առաջւան վախկոտութիւնը մոռացաւ, անվեհեր սիրտ ստացաւ և քաջութիւն: Այսպէս Վուրգն ու Արսէնը միմանց կըթելով եղան ինչպէս մի հոգի և մի մարմին, մինչև դառանութ-տասնութ տարեկան:

2.

Մէկ անգամ զրօննելու էին զուրս եկել գետավիր: Աղջկերը կմերով ջուր էին տանում գետիցը: Նրանց մէջ կար և մի պառաւ՝ նիհար ու կնճռոտ դէմքով: Վուրգի մօտով անցնելիս՝ պառաւը խեթ աչքով նայեց Վուրգի վրայ: Վուրգին դիւր չեկաւ պառաւի այս խոժոռ հայեցքը:

— Այս պառաւի կուժը պիտի կոտրեմ, — ասաց Վուրգն Արսէնին, և դեռ ընկերոջ պատասխանը չառած՝ մի բար նետեց պառաւի ետեից, որ ուղիղ կուժին դիպաւ և կոտրեց: Ճուրը թափսեց և ողողեց խեղճ պառաւին:

Թրջւած պառաւը յետ նայեց և երբ տեսաւ, որ թափառի որդին էր այդ չարութիւն անողը, ասաց.

— Այ որդի, ինչ անէծք տամ քեզ... Անտես-Աննմանի սիրովը վառւած տեսնեմ քեզ. նրա համար այրւես, տանջւես, որ սիրտս հովանայ:

## 3.

Պառաւի անէծքը սիրոյ հրեշտակի նետի պէտք ցցւեց Վուրգի սրտումը: Վուրգն սկսեց տխրել, նիհարել: Եա, որ Արսէնից ջոկելու սովորութիւն չունէր, միայնակ էր ընկում սար ու ձոր և առանձնութեան մէջ ողբում, լաց լինում, Անտես-Աննմանի անունը տալիս, դէպի նրան թռչում հոգով ու սրտով, նրան զովում երգերով, նրան կանչում օդնութեան: Անտես-Աննմանը պատկերանում էր նրա երեակայութեան մէջ իր աննման զեղեցկութեամբը: Նա աշքերը խփում էր այդ ժամանակ, ծունկչոքում, փառարանում, զմայլում այն աստիճան, որ ուշը զնում էր զլիսից, նղաւում, վայր ընկնում:

Եյս այն սէրը չէ, որ մեր ժամանակ մեր աշխարհումը կայ: Սա սէր էլ չէ խսկապէս, այլ մի զօրեղ փափազ, մի ուժգին իղձ, մի սաստիկ ցանկութիւն, մի մուրազ և ուրիշ այնպիսի զգացում, որ մարդ ունենում է իր սրտի ուզած երջանկութիւնը ձեռք բերելու համար: Այսպիսի իղձ մարդ կարող է ունենալ և ուսում, զիտութիւն ձեռք բերելու համար, իր յղացած նշանաւոր միտքը իրազործելու համար և ուրիշ շատ բաների:

Հին ժամանակները քաջ երիտասարդները իրանց հերոսութիւնը նրանով էին ցոյց տալիս, որ սար ու ձոր էին ընկնում և իրանց ուզած լաւ բանը ձեռք բերում կամ մտքումը զրած քաջութիւնը կատարում: Ի հարկէ, այդ բաների ձեռք բերելը պէտք է շատ դժւար լինէր եւ ոչ խաղ ու պար, պէտք է ամեն մարդու զործ չըլինէր. Եթէ ոչ էլ ի՞նչ քաջութիւն, էլ ի՞նչ հերոսութիւն կարող էր համարել:

## 4.

Արսէնից չէր կարող ծածուկ մնալ Վուրգի սրբտամաշութիւնը: Նա հեռաց հակում էր և տեսնում էր ամեն

բան: Նա այս բանը լաւ առիթ էր համարում թէ իր քաշութիւնը փորձի ենթարկելու և թէ ցոյց տալու իր անհուն սէրը, որ ունէր դէպի Վուրգը: Եւ ահա մէկ օր գըտնում է նրան անտառումը և ասում:

—Եղբայր, ես տեսնում եմ, որ զու հալումաշ ես լինում. ինձանից ինչո՞ւ ես թաքցնում քո վիշտը: Էլ ես ո՞ր օրւայ համար եմ, որ քեզ քո մուրազին շըհասցնեմ: Երթանք, երթանք, լաւ է յուսով մեռնել զործի մէջ, քան թէ անյոյս սատկել անզործութեան մէջ: Պառաւի անէծքը խսկապէս անէծք չէ, այլ մի շատ զեղեցիկ օրհնութիւն: Եթէ նա անիծած չըլինէր, զու այդ օրը չէիր ընկնիլ և ոչ էլ ուրեմն կաշխատէիր ձեռք բերել աշխարհիս ամննից զեղեցիկը:

Սըսէնի այս խօսքերից սաստիկ յուզեց Վուրգը, զըկեց նրան և արտասուրն աշքերին համբուրեց նրան, սիրահար պատամու չերմ համբուրով:

—Արսէն ջան, Արսէն, բացագանչեց՝ նա. որքան մեծանողի ես զու: Ես չէի ուզում իմ վշտին և կրելիք նեղութիւններիս մասնակից անել քեզ: Դու ինչո՞վ ես մեղաւոր. կուժը ես կոտրեցի, տանջւողն էլ ես պէտք է լինիմ: Բայց ի՞նչ կարող եմ անել ես առանց քեզ: Այսուհետու իմ մուրազը քո ձեռին է, իմ կեանքը քո բոնումն է. Իմ գլխումն էլ խելք չի մնացել, զու պէտք է ինձ առոջնորդես, զու պէտք է ինձ կամ կեանք տաս և կամ մահ:

—Ոչ թէ մահ, այլ կեանք միայն, ասաց Արսէնը: Զօրացիը և մի վհատկը. մենք շուտով ճանապարհ կընկնինք: Եւ ժամանակ է արդէն, որ մենք մեր ուժն ու շընորքը ցոյց տանք, էլ ուրիշ ի՞նչ բանի ենք պէտք. զութան չենք վարում, տաւար չենք պահում, պատերազմ էլ չըկայ, որ կորու զնանք. ինչո՞ւ համար ենք ապրում աշխարհիս երեսին, ինքս էլ շըգիտեմ: Զրի ապրելն ի՞նչ կը վայելէ տղամարդին:

—Բայց հայրս թոյլ կըտայ արգեօք, կամ ի՞նչպէս յայտնենք նրան:

— Եմաց կըտահք մի կերպ։ Գիտեմ, որ թոյլ և տալ,  
բայց մեզ կըբացատրէ մեր ձեռնարկութեան դժւարու-  
թիւնը, մեր նպատակին հասնելու անկարելիութիւնը և ա-  
ռանց մեր հարցնելու՝ ինքը կըյայտնէ տեղն ու ճանա-  
պարհը, որ մենք շըգիտենք։

5.

Թագաւորը, բացի Վուրդից, ունէր և մի աղջիկ, զե-  
ղեցկութեամբ ոչ պակաս, քան Անտես-Աննամնը։ Աստղիկ  
էր անունը։ Սա նոյնքան սիրում էր Արսէնին, ինչքան և  
Վուրդը։ Իմանալով եղրօր միտքը, հօրը յորդորում էր, որ  
թոյլ շրտայ նրանց այդպիսի մի վտանգաւոր ճանապար-  
հորդութիւն անելու։ Ով է յետ եկել այստեղից, որ զը-  
րանք յետ զան, ասում էր Աստղիկը։ — Կանչիր, խրատիր  
զրանց, որ այդպէս բան չանեն։ Ով է լսած, որ շրտե-  
սած աղջկայ վրայ սիրահարւեն. այդ մի խենթութիւն է,  
ուրիշ ոչխնչ։

Թագաւորը կանչեց երկուսին էլ և ասաց.

— Ամեն բան յայտնի է ինձ. Զատ ցաւում եմ, որ  
այդպիսի մի ցնորական վիշտ է ընկել որդուս սիրտը,  
բայց չեմ կարող թոյլ տալ ձեզ։ Այդ շրտեսնւած աղջկան  
համար շատ թագաւորների որդիք են կոտորել, շատ  
զօրք է փշացել, ես ինքս մասնակցել եմ այդ կոփիներին,  
օգնութեան եմ զնացել ուրիշներին։ Նա կենում է Եօթը-  
Լեռան քամակին Սե-Բերդումը։ Քառասուն եղբայր ունի  
մէկը միւսից աժզահա։ Քառասուն զունդ զօրք էլ որ լի-  
նի, նրանց ոչխնչ չեն կարող անել։ Ամեն մէկը մի ահա-  
զին կաղնի ծառ պրկած՝ զօրքերին այնպէս են սրբում  
պատերազմի դաշտումը, ինչպէս մենք սրբում ենք մեր  
կալերը ցախակով։ Ի՞նչ խելք կըլինի ուրեմն ձեր կող-  
մից, զնալ և այդ դեմքի ճանկն ընկնել։

ՄԵՐԸ ՀԱՅ

— Ներիք ինձ, հայր թագաւոր, որ համարձակւեմ քեզ  
հետ վիճել, ասաց Արսէնը։ Ոչ մի ուժ աշխարհիս ե-  
րեսին չի կարող Աստուծոյ կամքին հաւասարել։ Աւծն  
Աստուծոյ ձեռին է. երբ ուզենայ, կըզօրացնէ, երբ չէ  
կըթուլացնէ և զօրեղ գեին մի երեխայ կըշինէ։ Դու ա-  
սում ես, որ շատեն են կաւել և յաջորդութիւն չեն ու-  
նեցել. բայց արգեօք այդ շատերի մէջ եղել է մի մարդ,  
որ իր սնունդն առիւծից լինի առած։ Ով տւառ առիւծին  
այդ գութը, որ ինձ պահէ, պահպանէ, եթէ ոչ Աստուած։  
Արգեօք այդ կըուտղների մէջ եղել է մէկը, որ Վուրդի  
նման սիրահարւած լինէր և կամ մի որ և է պառաւ իր  
անէծքով կամ օրհնութիւնով նրա մէջ ձգած լինէր Ան-  
նմանի սէրը։ Ինչու չըկարծել, որ այս յիշած բոլոր գէպ-  
քերի մէջ մի աներեսոյթ կապ կայ, և դրանք նրա համար  
են այսպէս միացել, որ ձեռք բերեն այն, ինչ որ ուրիշ-  
ները չեն կարողացել։

— Եատ խելօր ես խօսում, Արսէն, ասաց թագա-  
ւորը. զու լաւ պատգամախօս կըլինիս և ամեն հրաշ-  
գործութիւն կը յաջողի քեզ, քանի որ քո մանկութիւնն  
ինքը մի հրաշք է։ Բայց պէտք է զիտենաս, որ քուրմ է  
եղել թէ հրաշագործ, թագաւորի հրամանովն են անում,  
ինչ որ անում են, իսկ թագաւորը նրանց զործ է զնում  
իր օգտին, առանց նրանց ինքն անձամբ հաւատալու։ Գու  
կարող ես, այս, քրմապետ լինել, բայց ոչ ինձ հաւատի  
բերելու համար։ Իմ ասածը ասած է։

— Հայր, խօսեց Վուրդը, մի և նոյն է, եթէ չը-  
գնամ էլ, այս ցաւով պիտի մեռնեմ ես։ Ես արդէն մե-  
ռած կըլինէի, եթէ Արսէնի յուսատու յորդորները չըլի-  
նէին։ Եթէ թոյլ շրտաս մեզ զնալ, իմ յուսահատելս ու  
մեռնելս միասին կըլինի։ Գթա ինձ, օրհնիր մեզ և ճա-  
նապարհ զիր։

— Մի հաւատար, հայր, մէջ ընկաւ Աստղիկը. ով է  
մեռել սիրուց, որ եղբայրս մեռնի։ Պարապութիւնից խեն-  
թութիւն է եկել վրան։ Պատերազմ յայտնիր Անդաս

թագաւորի դէմ, թող երթայ՝ այնտեղ ցըւէ իր ցնորք-ները . . .

—Քեյր իմ, սիրելի քոյր . . . բացազանչեց Վուրգը, աղաշողական հայեացք ձգելով Աստղիկի վրայ:

—Եղբայր իմ, սիրելի եղբայր, պատասխանեց Աստղիկը, այնպիսի մի հայեացք ձգելով Արսէնի վրայ, որի մէջ ամփոփւած էր մի ամբողջ վէպ:

Վուրգն իմացաւ, որ քոյրը նոյնպէս սիրահարւած է, և հթէ իր սէրը պահանջում էր հեռանալ, քրոջ սէրը, ընդհակառակը, պահանջում էր շըհեռանալ:

—Գնանք, գնանք, ասաց Արսէնը: Մենք մեզ կըյահձնենք Աստուծոյ կամքին. ինչպէս Նա կըտնօրինէ, մենք էլ այնպէս կըպարւենք:



## 6.

—Վճռւած է, բացազանչեց Արսէնը Վուրգի ներկայութեանը, իրը ինքն իրան խօսելով, —պէտք է զնանք, պէտք է զնալ անպատճառ... Ես Աստղիկի սիրոյն ինձ արժանի չեմ համարիլ, մինչև նրա եղբօրը շըհացնեմ իր մուրազին: Ով եմ ես, ով է իմ հայրը, մայրը... Ասլան-Բալա... դատարկ հնչիմ, որ ոչ մի եղանակ չունի: Ի՞նչ եմ արել, ինչով եմ բարձրացրել այդ անունը, ինչով եմ պատւել իմ Սոխւծ զայեակիս կաթի արժէքը... Ոչ, ես առիւծի կաթ չեմ ծծել ուրեմն. . . Գնանք, գնանք, Վուրգ... Դեռ յայտնի չէ, թէ մեր երկուսից որն է աւելի սիրահարւած և որի առջև կան աւելի խոշոր բարյական խոշընդուներ: Գնանք, հոգիս, գնանք. վետքաւորւենք սիրոյ թեկելով և սլանանք դէպի վեր և վեր. . . Ա՛ն, ինչ օր կըլինի, երբ մենք արգէն Սև բերդումը կըլինինը . . .

Սեր քաջերը, այսպէս ովկորւած, զնացին թանգարանը, ընտրեցին իրանց ուղած զէնը ու զրանը, վերց-

ըին մէկ մէկ հատ հին պապական աղօթած թրեր, որոնցով քար ու երկաթ կարելի էր կտրել, թամբեցին թրոչ-կան ձիաները և «որսի ենք գնում» ասելով, ձիանը հեծնելն ու անհետանալը մէկ արին: Օրեր անցան, մեր տըղէքը չերևացին: Նոր զլխի բնկան, թէ ուր կըլինին գընացած...

## 7.

Եօթը-Լեռան քամակին Սև բերդումը Անտես-Աննմանի հակայ եղբայրները մեծ տօն էին կատարում իրանց արած յաղթութիւնների համար: Եօթը դեւի գլուխ էին կտրել և հօթն աղջիկ աղատել գերութիւնից: Իրանը էլ եօթը եղբայր էին ընդամենը, թէ նրանց համբաւը քառասունի էր հասել, եօթն էլ պսակւել էին գերութիւնից աղատած եօթն աղջկերանց վրայ: Ամենըն էլ ուրախ ու զւարթ էին, տխուր էր միայն Անտես-Աննմանը:

—Ինչու այդչափ տխուր ես, քոյր իմ, ասաց մեծ եղբայրը: Եօթը եղբայր ունիս, եօթն էլ քեզ համար զլուխը յետ զրած, հիմա էլ եօթը հարս ունիս, ամենքն էլ քո աղախինդ լինելու պատրաստ, թէս բոլորն էլ մեծ իշխանների և թագաւորների աղջկերը են: Եթէ մէկ հոգս ունիս, ասա մեզ, մենք պատրաստ ենք կատարնելու քո ամեն մի չնչին քմոյշն անզամ:

—Ես ինքս էլ շըպիտեմ, թէ ինչի եմ տխուր, ասաց Աննմանը. այս զիշեր մի երազ տեսայ, երկի նրանից է...

—Ի՞նչ ես տեսել, ինչ ես տեսել, ասա մեզ, կըկնեցին բոլոր եղբայրները:

—Երազում տեսնում էի երկնքից իշած երկու հրեշտակ, մինը քան զմիւսը զեղեցիկ: Մէկը թուր ունէր ձեռին, իսկ միւսը մի վունչ ծաղիկ: Թրատը թուրը շողշողացնում է ձեր զլխներին, իսկ վնջաւորը դէմ էր անում ինձ իր հոտաւէտ փունջը: Այս երազիս մէջ էի, մէկ էլ պատուհանիս առջև մի թոշնիկի ձայն լսեցի, որ եր-

զում էր «Վարդ—Վարդ—Վարդ»։ Այս անւան վրայ ես զարթնեցի և մի կերպ եղայ, քիչ մնաց սիրտս դնում էր։ Կարծես թռչնիկը այն հրեշտակի անունը տւառ, որ ինձ մի փունջ ընծայեց, և ինչքան գեղեցիկ էր նա, ինչքան, ինչքան...

Սսաց քոյրը և արտասուրն աշքերին հեռացաւ եղբայրներից, որ իր ներքին յուզմունքն ու շփոթութիւնը ծածկէ նրանցից։

—Մեր քոյրն իր բուրան ստացել է, ասաց մեծ եղբայրը. եթէ այդ բութա տըւողը զայ, մենք պիտի յաղթմենք։ Մը շողշողալը մեր յաղթւելն է նշանակում։

—Եւ կարծեմ ժամանակ էլ է, որ մեր քոյրն իր մուրագին հասնի, ասաց վոքը եղբայրը, —բաւական է, որքան որ արիւն թափեցինք զբա համար։ Այսուհետեւ ով որ զայ, իմ զլխի վրայ տեղ ունի։

—Այդ շատ լաւ ես ասում, ասաց մի ուրիշը, բայց կարելի է թէ եկողը նրա Վուրդը չէ, այլ մի ուրիշը, միթէ մենք պէտք է ամեն եկողի տանք մեր քոյրը։

—Ո՞չ, ձայն տւին ամեն կողմից, —թող մեր զըլխին թուր շողշողայ և մեր քոյրը իր ուզածին զնայ։

Այսպէս խօսեցին եղբայրները, բայց ամենի սիրտն էլ այնպիսի մի ահ ընկաւ, որ մինչև այդ օրը նրանցից ոչ մէկն զգացած չէր։

## 8.

Մեր տղէքը ուղիղ եօթն օր ճանապարհ զնացին, ճանապարհին շատ շար ու բարի տեսան, շատ տեղ յայտնեցին իրանց ճանապարհորդութեան նպատակը, շատերից սարսափելի վտանգներ լսեցին, բայց իրանք աներկիւդ շարունակեցին իրանց ճանապարհը, մինչև հասան Սե-Բերդի սահմանը։

Մի անտառապատ և բարձր լեռան վրայ էր Սե-Բեր-

դը։ Երբ մօտեցան բերդին, իջան մի գեղեցիկ ծաղկաւէտ հովտի մէջ մի աղբիւրի վրայ։

—Դու վայտ հաւաքիր և կրակ վառիր, ասաց Արսէնը, իսկ ես մէկ կրբարձրանամ դէպի այս ձորի խորքը, կարելի է մէկ որս ճանկեմ։ Հետքեր շատ կան, այստեղ լաւ որսի տեղ է։

Արսէնը զնաց, իսկ Վուրդը, վոխանակ վայտ հաւաքելու, սկսեց ծաղիկ քաղել և շատ ճաշակով մի գեղեցիկ փունջ կապեց։ Մինչև Վուրդն իր վունջը կըկապէր, Արսէնը եկաւ մի ահապին վարազ շալակած։

—Ո՞ւր է կրակը, հարցրեց Արսէնը։

—Կրակը սըտումս է, պատասխանեց Վուրդը։ —Ես Անտեսիս համար տես ինչ գեղեցիկ վունջ եմ կապել։

—Ուրիսն դու զեռ ջուրը շըտեսած, ոտներդ հանել ես արդէն։ Լաւ, անց կենանք ուրեմն այդ ջրովը, մօտենանք բերդին և այստեղ վառենք կրակը, որ շուտ նկատեն մեզ և զան, տեսնենք՝ ինչ են ասում։

—Ես էլ եմ կարծում, որ այդպէս լաւ կըլինի։ Ինչ լինելու է, թող շուտ լինի։

Բարձրացան մինչև բերդի պարսպի տակը, որտեղ կրակ վառեցին, և ամբողջ վարագը, փորը միայն դատարկած, քաղեցին մի հաստ ձողի մէջ և սկսեցին խորովել։ Այսպէս զիտութեամբ արաւ Արսէնը, որ տեսնողը նրանց հասարակ մարդիկ շըհամարէ, այլ հսկաներ։

Հէնց որ բարձրացաւ կրակի ծուխն ու բոցը և հասաւ մինչև ամպերը, հսկաները վեր նայելով նկատեցին այդ և իրանցից մէկին ուզարկեցին, որ տեսնէ՝ ինչ բան է, ովքեր են եկողները, և շուտով լուր բիրէ։

—Ահա զալիս է մէկը, ասաց Արսէնը, դու վեհանձն եղիր, տեղիցըդ շըշարժես, այլ միայն դէպքին յարմար հրաման տուր ինձ, որ նրանք նկատեն, որ զու իմ պարոնն ես, ես քո ծառան։

Մի աժդահա մարդ էր եկողը։ Թէկ պակաս հսկանել չէին և Արսէնն ու Վուրդը, բայց նրա համեմատութեամբ փոքը էին։

—Ի՞նչ մարդիկ էք, կանչեց հսկան հեռւից...

Արսէնը ձեռքով արաւ, թէ՝ մօտ եկ, տեսնենք ինչ ես  
ասում:

Հսկան մօտեցաւ, ե երբ տեսաւ ամբողջ վարագը  
խորովելիս, առ ընկաւ սիրտը, բայց իր երկիւղը ցոյց  
շրտալով, սկսեց բարկանալ, թէ ինչպէս են համարձակւել  
իրանց որսերին դիպչել: Կոացաւ, որ շամփուրը վեր առ-  
նէ, շպոտէ, Արսէնը բոնեց նրա օձիքից և այնպէս հեռու  
մղեց, որ հսկան կոճղի պէս զլորւեց: Սաստիկ զայրացած  
վեր կացաւ տեղիցը և կպաւ Արսէնին: Արսէնը, որ ար-  
դէն փորձել էր հսկայի ուժը, բոնեց նրա ականջներից և  
այնպէս քաշեց. որ զլորւխը խփեց զետնին և ծուսը զնել  
տւաւ իր առաջին: Այդ ժամանակ Վուրգն այլ ևս չուզեց  
պարապ մնալ, արձակեց հսկայի կաշւի պլնդ զօտին և  
նրանով կապուտեց նրա կոները: Կաշկանդւած հսկոյին  
յետոյ կապեցին մի հաստ ծառից և իրանք սկսեցին ի-  
րանց նախաճաշիկը:


—Մկիզբը լաւ է, ասաց Արսէնը, տեսնենք վերջը  
ինչ կըլինի: Յետոյ դառնալով հսկային՝ ասաց.

—Մենք եկել ենք ձեզ մօտ հիւր, և դուք այդպէս  
էք ընդունում ձեր հիւրերին: Կուզես մի կտոր միս տամ,  
կեր: Այս ասելով մի մեծ կտոր մօտեցրեց հսկայի բե-  
րանին:

—Խոկ դուք այդպէս էք հիւրասիրում ձեզ մօտ եկո-  
ղին, ասաց հսկան: Արձակեցէք և այնպէս հրաւիրեցէք  
ինձ ճաշի:

—Բայց յետոյ, խօսք տալիս ես, ասաց,—որ չես  
փախչիլ և քո եղբայրներին խմաց տալ: Կամ եթէ խօսք  
էլ տաս, ով կըհաւատայ քո խօսքին: Բայց որ հաւա-  
տաս, թէ մենք վատ մարդիկ չենք, տես այս թուրը. մի  
հարւածով կարող էի այս բավէիս թոցնել զլուխդ, բայց  
կեանք քեզ եմ բաշխում, որովհետեւ իմ պարոնն այսպէս  
է կամննում, արխին թափելու հրաման չի տալիս...

Այս խօսակցութեան ժամանակ, մէկ էլ տեսան, որ  
մի ուրիշ հսկայ էլ է զալիս: Նա որ տեսաւ իր եղրօրը



ծառից կապած, ջանը դող ընկաւ, բայց աւելի էլ բարկացաւ, քան առաջինը, և առանց հարցուփորձի, ուղղակի յարձակւց մեր տղայոց վրայ: Արսէնն առաջ անցաւ և նրա ականջներն էլ զցեց ճանկը և չորացրեց առջեր, ասելով.

— Նախ երկրպագութիւն տուր մեզ. մենք հասարակ հողեղին չենք, այլ ձեր հոգիառ հրեշտակներն ենք:

Այս խօսրի վրայ ահագին հսկան այնպէս զողողաց, ինչպէս մի նապաստակ որսկան շան ճանկերում: Արան աւելի հեշտութեամբ կապոտեցին եղրօը կողքին:

Յետոյ եկան եղրորդը, չորրորդը, մինչև եօթներորդը:

— Ո՞ւր են ձեր միւս եղբայրները, զոռաց Արսէնը, թող զան ձեզ օգնեն:

— Էլ ուրիշ եղբայր չունինք, ասաց ամենից մեծը. այս ենք որ կանք:

— Եատ լաւ, ասաց, — հիմա ինչ փրկանք կրտաք մեզ, որ ձեզ աղատենք: Տեսնում էք ահա, որ ձեր կեանքը մեր ձեռին է. մի մի հարւածով կարելի է թուցնել ձեր բոլորիդ դիմները:

Եւ Արսէնն սկսեց թուրը շողղողացնել նրանց գըլըխներին...

Այս միջոցին մի ձայն հասաւ Արսէնի ականջին:

— Ո՞հ, խնայեցէք, խնայեցէք իմ եղբայրներին. այդ դուք չէիք, որ յաղթեցիք դրանց, այլ ճակատագիրը:

Արսէնը յետ մտիկ տըւաւ և տեսաւ, որ մի աղջիկ է դալիս՝ սպիտակ քողն երեսին:

— Ես գործ չունիմ նրա հետ, ասաց Արսէնը Վուրդին, — նա քո բաժինն է, ինչ կուզես՝ արա:

— Ո՞հ, երկինք, օգնիր ինձ, բացազանչեց Վուրդը և փունջը ձեռին մօտեցաւ աղջկանը և ծնկաշոք թաւազա արաւ, ասելով.

— Ո՞վ իմ Անտես-Աննման, առ այս փունջն ինձանից, սրա հետ քեզ եմ նսիրում ես նաև իմ սիրտն ու հոգին:

— Կընդունեմ այդ ընծան, որովհետեւ տւողը Վուրդն է:

— Որտեղից գիտես զու իմ անունը, ով իմ նազելի:

— Երկնքի թոշուններն ասացին ինձ, պատասխանեց աղջիկը. և քողն երեսից յետ քաշելով՝ ասաց:

— Ահա ես էլ քեզ նւէր:

Վուրդը տեսնելով Աննմանի գեղեցկութիւնը, սիրտն սկսեց թթուալ, հաղիւ կարողացաւ զրկել նրան և համբուրել, բայց աղջիկը նոյնպէս նղաւեց և երկուսն էլ ուշաթափւեցին:

— Եղբայրս վայելեց մարդկային կեանքի միակ երջանիկ ըսպէի բաղցրութիւնը. այսուհետեւ թէկուզ մեզ կոտորեն, էլ հոգ չունիմ, ասաց Արսէնը և ուրախութեան արտասուլքն աշքերին՝ մօտեցաւ հսկաներին և ամենքի էլ կապանքներն արձակեց:

Հսկաները նոյնպէս յուզեցին սրտի խորքից, մանաւանդ որ նախապատրաստած էին արդէն իրանց քրոջ երազից: Մի քանիսը վաղեցին տուն, որ պատրաստութիւն տեսնեն հիւրեղի համար, մի քանիսն էլ Արսէնին իրանց մէջն առած՝ ճանապարհ ընկան գէպի տուն, զովելով նրա տղամարդութիւնը: Իսկ Վուրդն ու Աննմանը ամենից յետոյ էին զնում և շուտ շուտ կանդ առնում, իրար երեսի մտիկ տալիս, մէկ մէկով հիմնում, զմայլում և միմեանց պատմում իրանց տեսած երազները:

Մեր քաշերին երեք օր պահեցին հսկաները և ամեն օր մի նոր ուրախութեան հանգէս սարքեցին: Երեք օրից յետոյ ճանապարհ զբին մեծ բահը ու բաժինքսիվ:

Երբ տուն հասան, մի նոր կերուփում սարքեց թագաւորը և երկու պսակ միասին կատարեց՝ Վուրդին Անտես-Աննմանի հետ, իսկ Արսէնին՝ Ասաղիկի: Այս հարսնիբումը, ինչպէս ամոն հէքիաթի հարսանիբում, նոյնպէս երեք ինձոր վայր ընկան ուղղակի երկնքից, միայն այս ամսգամ ինձորները ասողի և լսողի համար չէին, այլ մէկը հաւատի և քաշութեան համար, երկրորդը յուտոյ և առաքինութեան և երրորդը սիրոյ և ուժի համար:



Խնդրում ենք այն անձանց, որոնք հաւաքած ունեն  
ժողովրդական ընտիր հէրիաթներ, ուղարկել Ընկերու-  
թեանս այդ հէրիաթները մշակելու և մեր սերիայի մէջ  
պատկերագարդ հրատարակելու համար:

ԱհՏԱՀԱՆՔՈՅՑ և 1954 թ.

Գիտական համար և պահպանի մեջ  
12/54/2020

Վահ գրուստ Հայոց Առաքելոց

Տեղական գրքեր



18.696

891.99  
LX-44